ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«19» մայիսի 2026թ. ՆՄՈ/294-Ա

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԲԱԶՄԱՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N751-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածի 17-րդ և 18-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2026 թվականի մայիսի 7-ի N403-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և խնամատար ծնող դառնալ ցանկացող անձի տվյալների համադրում իրականացնելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմում ստեղծել բազմամասնագիտական աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2026 թվականի մայիսի 19-ի
N ՄՈ/294-Ա որոշման

# ԿԱԶՄ
# ԲԱԶՄԱՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

**Անդամներ՝**

Ա.Գալոյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ.

Գ. Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ.

Ն.Մուրադյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ.

Ն.Ասատրյան - Հայաստանի Հանրապետության Միասնական սոցիալական ծառայության Արմավիրի տարածքային կենտրոնի տնօրեն:

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ